65. ՔՈՌՈՒ, ԴԵՐՎԻՇԻ ԵՎ ԳԼՈՒԽ ՔԱՐԵՐ ՁԱՐԿՈՂ ՄԱՐԴՈՒ ԳԱՂՏՆԻՔ

Ժամանակին կնիկըմ կէղի, ու ուրին մեկ թաք տղեմ։

Էտ տղեն կջոջընա, մոր կըսե թե.— Գնա, էսինչ հարուստի ախչիկ հ'ուղե ընծի։

Կըսա,— Լա՛ո, մինչև էսօր մենք կէրթանք էնոց դուռ խաց կուզենք, մենք էսօր իմա՞լ էրթանք էնոց ախչիկ հ'ուզենք։

Կըսա.— Դու գնա հ'ուզա, քզիկ ի՞նչ լախա կա. տվին՝ տվին, չտվին՝ չտվին։

Մեր կելնի կէրթա, կուզա։

Էդ հարուստ մարթ կմտածա, կըսա. «Ես հ'ելնիմ էդա կնկան անպատվեմ, էս կնիկ պիտի էրթա իր տղին ըսա, տղեն էլ մեննակ թաք տղեմ ա, ոչ բանե կվախենա, և ոչ բանե կամչընա»։ Կնստի կմտածա, կըսե՝ «Էնպես էնեմ օր էս տղեն տամ կորցնել»։

Կըսա.— Գնա քու տղին ըսա թող գա հոս, բան կըսեմ։

Մեր կուգա, տղին կըսա, տղեն կելի կէրթա մոտ։

Էդ հարուստ, տղին կըսա.— Դո՞ւ կուղիս իմ ախչիկ առնես։

Տղեն կըսա.— Խա՛, կուղիմ քու ախչիկ առնիմ։

Կըսա.— Ուրեմն էկուր զքեզի՝ ճամբիմ, գնա Երուսաղեմ. էն տեխ իրեք բան կա, էդ բաներու խորհուրդ խասկցիր, էկուր ընծի պատմա՝ իմ ախչիկ կուտամ քեզի։ Բայց ուրիշներ շատ անգամ գացած են, անկարելի ա էղեր էդոնց խորհուրդ խասկնալ։

Տղեն կըսա.— Ես փարա չունիմ, ես ի՞նչպես դարտակ ձեռոք էրթամ։

Կրսա.— Արի տամ քեզի հ'իսուն օսկի ճամբու ծախս, ծախսա քեզի, գնա՛, հասկցիր, արիր։

Տղեն ա, կառնի հ'իսուն օսկին ու կհիջա զուր աստված, կընկնի ճամբախ կէրթա։

Կէրթա, առաջին էդ մարթու ցավ պիտի խասկնա, օր նստեր ա ու գլուխ քարե-քար կզարկա։

Կէրթա էդ տեխ կնստի, կտեսնա օր մարթ զգլուխ կղանե էնա քար, էնա քար։ Կէրթա մարթուն բարև կիտա, մարթ բարև չառնիր։

«Կեցիր, կրսա, ես պիտի նստիմ էսա դեխ սպասիմ, տեսիմ էսի իրկուն դո՞ր կէրթա»։ Տեսավ օր իրկուն մոտեցավ, մարթ էղավ մեռել՝ ընկավ դետին։ Դրկեցի կնկդիք էկան վերցին, առան գնացին, տղեն էլ գնաց հ'տևեն։

Կէրթա, գիշեր դեխ կպառկի, մինչև առավոտուն։ Առավոտուն օր էղավ, տղեն հ'ելավ քնուց, դնաց էդ քարերու մոտ կանավ ու սպասեց, տեսավ մարթ էնկից էկավ։ Բռնեց մարթուն, շատ խնգրրվավ ու աղաչեց, ըսավ.

— Եթե կէղնի իսա, դու քու ցավը ընծի պատմես։

Մարթն ըսավ.— Ինչի՞ դու էդ խրդար կփափաքիս իմ ցավ հասկընալու։

Տղենն ըսեց.— Իմ աչք ընկեր է ախչիկըմ, ախչկա խեր ընձի ըսավ՝ «Գնա էն մարթու ցավ խասկրցիր արիր, իմ ախչիկ տամ քեզի»։

Կրսա.— Ուրեմն դու էդպես կրսես, ես իմ գլխու գալած քեզի պիտի պատմեմ, օր դու էրթաս, քու սրտի մուրատին խասնես։— Կրսա.—Ես երիտասարդ տղա ի, հ'ելա կարդվա, մնացի տարի մի. ընձի տղեմ էղավ. էդ տղեն կես տարեկան ես թողեցի գացի խուրբաթ, մնացի քսան տարի. ահագին դրամ աշխատա, բայց ոչ իմ տուն դրամ ճամբեցի, և ոչ ալ նամակ։ Մնացի, քսան տարվեն վերջ հ'ելա, թողեցի, տունս էկա, էկա, իրիկուն էր իջա գեղ, ես ընծի, ընծի ըսի. «Կանիր էրթամ երդրքեն գաղդուկ նայեմ, տեսիմ իմ կնիկ ի՞նչ կէնա». էկա նայեցա, օր իմ կնիկ մենակ նստուկ էր, թշնամին մտավ ընծի. ես չիջա ցածր, ըսեցի. «Կեցիր մինչև գիշեր իշենք իմ կնկա քով ո՞ր կիգա»։ Տեսա կես սահաթ վերջ երիտասարդ տղե մի ներս մտավ, ձեռք բռնած շորով է լի էմիջ. մտավ ներս, իմ կնիկ հ'ելավ, հասավ էրեսներ պագեց, էմիշ ձեռքեն առավ ու էկան նստան։ Իմ սիրտ շփոթավ։ Ըսեցի. «Էս տղեն ի՛նչ տղա էր էկավ էս կնկան քով»։ Մինչև գիշեր սպասեցի, տեսա օր շորեր հանեցին, էրկուք մեկ տեխ պառկան, քուն հ'ընցավ վրաներ.

ես քաշեցի խամեն, գնացի դուռ ճրխնեն հ'ընկուցի, մտա ներս, էկա իրենց ջըլերու վրեն, խամեն դրեցի էրկուքի վզին ու օդս դրեցի խամի վրեն, ուժով մը քաշեցի, կտրվավ էդոնց վզեր ու էդոնց արնի մնչեն ձեմ՝ հելավ թե՝ «Դու ընչի՞ մոր ու օրթու մեղաց տակ մտար»։ էն ժամանակ տփեցի վըր չոքերուս, ըսեցի. «Ես քոոցուցի իմ աչքերը, օր իմ օրթին ու կինը սպանեցի»։ Խըլուսուն հ'ելա, բերեցի իմ դռան հ'առեջ փորեցի, կնիկ մեկ խորու մեջ դրի, տղեն մեկ ու մեկ մեկ քար դրեցի վրաներ ու էս քարեր մըկա էնոքն են, կուդամ գլուխս կզանեմ էն քարեն էն քարին օր սիրտս հանգստի, բայց անկարելի է, սիրտս չհանգստիր, հ'ուրիշ մարթու չըսեր ի, բայց դու օր կէրթաս քու սրտի մուրատին խասնիս, էնոր խամար ըսեցի։

Տղան է, էդոր ցավ ու խորհուրդ հասկցավ գնաց։

Գնաց ջուկայի մեջտեղ, տեսավ դարվեշըմ, ձեռք բռներ է պատկերք մի, կուգան էդ պատկերքին հինգ խարուր օսկի փարա կուտան, էդ մարթ չի տար, կսկսի ձևել ու կթափա գետին ու կէրթա։

Եբ օր կէրթա, էդ տղան կընկնի հ'ետևեն կէրթա, կէրթա կմտնի ուր տուն, տղեն էլ հ'ետևեն կէրթա։

Կէրթա էդորից կխնդրվի, կըսա.— Քու ցավն ի՞նչ ա. օր խինդ խարիր օսկի կուտան էդ պատկերքին, դու չըս իտա, վերջեն կըձևես թալես։

Կըսա.— Իմ ցավ ես մարթու չեմ պատմեր։

Տղեն շատ կխնդրվի մոտեն, կըսա թե.— Ես պիտի էրթամ սրտիս մուրատին հասնիմ, իմ աներ ընծի ասաց, օր՝ «Դու էրթաս, էնոր ցավ խասկնաս գաս, նոր իմ ախչիկ կուտամ քե, չը նե, անկարելի է, ախչիկ չըս առնի»։

Կըսա.— Ուրեմն, դու կէրթաս քու սրտի մուրատին խասնիս, ես ալ իմ ցավ քզի կհայտնեմ։

Կըսա.— Ես արշալույսի ատեն էր, աղոթք կէնի, հանկարծ ննճացի, քուն հ'ընցավ վրես, ես տեսա էրազիս մեջ օր զիս վերցին տարան, անանկ սենյակմ՝ դրեցին օր սենյակի չորս պատ օսկի էր, խորոտիկ կնիկմ՝ մեջ նստուկ, օսկի օրոց հ'առեջ դրուկ, ուր ճիժ մեջ կօրորեր։ Խոսք էտուր ընծի օր զիս պիտի առներ, ես ալ էտոր պատկերք քաշեցի։ Քաշելեն վերջ, մեկ ալ հ'արթա, տեսա օր իմ տեղն եմ, տեսածս էրազ, բայց պատկերքս ձեռքս է, ահավասիկ էն պատկերք կախեր եմ պատեն, օրական խատմ՝ կիչքեմ վրեն, կքաշեմ, կտանեմ շուկեն, կիչքեմ օր թաքավորի տղեն, փաշեք կուգան խարիր օսկով, խինգ խարիր օսկով փարա կուտան, սրտիս չբերեր ծախեմ, ես էլ ինատու կձևեմ, թալեմ. իմ ցավն էլ էսի է,

մարթու պիտի չասի, բայց դու օր կէրթաս քու մուրատին կխասնիս, էնոր խամար քեզի պատմեցի։

Էնոր ցալն էլ խասկցավ, թողկեց էկավ։ Էկուվ քոռ մարթու քով օր նստուկ էր ճամբու վրեն, էրթացող գալացողին կըսեր՝ «Էկեք առեք ձգի քառսուն փարա, կայիմ սիլեմ ընծի զարկեք»։ Կէրթեն կառին ու կզանեն ու մարթ կըսեր՝ «Օխե՜ղ, իմ կես հախին չէ»։

Տղեն էր, մինչև իրիկուն սպասեց էղ դեխ, տեսավ օր մարթ, իրիկուն էղավ, հ'ելավ դնաց, տղեն էլ ընկավ ետևեն։ Ընկավ ետև դնաց մինչև քոռու տուն. մտավ ներս, ըսավ.— Կխնդրեմ քինե, քու էղելութեն ընծի պատմես։

Կույրն ըսավ.— Անկարելի է, ես իմ էղելութեն մարթու չըմ պատմի։

Տղեն շատ խնդրվավ մոտեն, աղաչեց։

Կույրն ըսավ.— Ինչո՞ւ համար էդչափ կաղաչես։

Ըսավ.— Ես, ախչիկմ՝ կա պիտի առնիմ, ախչկա խեր ընծի ըսավ՝ «Մինչև օր էնոր էղելութեն չէրթաս չհասկնաս չի գաս, ես քեզիկ ախչիկ չեմ տար». էնոր համար ես կաղաչեմ քեզնե, օր դու քու էղելութեն պատմես, օր ես էրթամ հասնիմ իմ սրտի մուրատին։

Կույրն ըսավ.— Ես մարթու չպիտի պատմեի, բայց քանի օր դու մուրատի վրա ես, կպատմեմ քեզի, օր գու էրթաս հասնիս քու սրտի մուրատին։

Սկսավ պատմել.— Էսկից հինգ տարի առաջ դառվեշըմ էկավ էս քաղաք, հ'ելավ մինրի գլուխ, ըսավ՝ «Ով օր հ'իսուն խըռոշ չտա ընծիկ, ես կձգեմ ընծի էդա մինրից ցած»։ Ես համալ մարթմ՝ էի, իմ մոտ լե կար հ'իսուն խըռոշ փարա։ Տեսա օր իրեք օր էդ դառվեշ էդ դեխ բոռաց, մարթ էդոր ձեն լսող չէղավ, ես էլ էդ մարթ մեղքացի, ըսեցի. «Կեցի ես իմ մոտի հ'իսուն խըռոշ տանիմ տամ էսոր, էսոր հոգին ազատեմ»։ Գնացի կանչեցի՝ վար իջավ, ըսեցի. «Ա՛ռ քեզի հիսուն խըռոշ, գնա»։ Իծմե հարցուց ըսեց՝ «Դու ի՞նչ արհեստ կէնես». ըսեցի՝ «Համալ եմ»։ Ըսավ՝ «Էդա քաղաքի մեջ մի՞թե վաճառական թուճար չկա՞ր օր դու բերեցիր տվեցիր». ըսեցի՝ «Շատ ալ կա, բայց քանի օր տվող չէղավ, ես ալ ըսեցի, կեցիր տանիմ տամ, էս մարթու խոգին ազատեմ»։ Եր օր ես փարեն նե տվեցի, էդ դառվեշ հանեց ընծի շուշեմ տվավ, մեջ ըլլին դեղ, ու թեբուրմ ալ տվավ ընծի, ըսավ՝ «Ամեն օր էս թեբուր կթաթխես էս դեղի մեշ ու կքսես քու ձախ աչք, բայց աջ աչք չքսես, եթե քսես՝ կքոռնաս»։ Ես ալ բերեցի էկա, առաջի անգամ քսեցի իմ ձախ աչ,

աչքերս լուսովցավ, ինչ օր խողի տակ կար հ'ըմեն բան կտեսի, շատ իսպինեք խանեցի. օրմ' էլա ըսեցի՝ «Կեցի քսեմ իմ աջ աչք, տեսնինք ի՞նչ պիտ էղնի»։ Քսելու պես հանկարծ քոռցավ էրկուս լև, ինոր համար ես օր կէրթամ կանիմ շարսուի մեջդեխ, գալացող էրթացողին քառսուն փարա կիտամ, կըսիմ՝ «Սիլեմ զարկեք իմ էրեսին» ու կըսիմ՝ «Օխե՜շ, իմ կես հախին չէ». էդպիսով կուզեմ սիրտս հանգստացնեմ, բայց անկարելի է, սիրտս չհանգստի։

Տղեն էր, էդ էղելութիններ ամբողջ հասկցավ ու հ'ելավ շնորհակալ էղավ մարթուց, թողկեց էկավ։

էկավ դնաց ուղղակի իջավ աներոջ տուն։

Աներ ըսավ.— Բարով էկար, խասկցա՞ր էղելութին՝ ժըխո չէ։

Տղեն պատմեց, ըսավ թե.— Հասկցա, իրեքին էլ։

Նստավ դեն, մեկիկ մեկիկ, ինչպես օր մենք թարիֆ էնինք, աներոջ թարիֆ էնեց։

Աներն ըսեց.— Շատ աղեկ, քու հարսնեց պատրաստութեն տես։

Բերեց ուր ախչիկն ու տղեն պսակեց իրարու վրա։

էնոնք հասան ուրանց մուրատին, դուք էլ հասնիք ձըր։

Աստծուց իջավ իրեք խնծոր՝ մեկ ասողին, մեկ լսողին, մեկ էլ անկաճ էնողին։